

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ԻՆՏԵԳՐԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած “Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգով” սահմանված դրույթները նախատեսում են ինտեգրման տարբեր ձևեր, մասնավորապես՝ “Մեկ պատուհանի սկզբունք”, “տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ինտեգրում” և այլն:

2. Ինտեգրման միջոցով ակնկալվող արդյունքի գնահատումը հնարավոր կլինի Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի նիստի N21 արձանագրության 5-րդ կետի 2-րդ ենթակետի 3-րդ պարբերությամբ նախատեսված փորձական ծրագրի իրականացումից հետո, որում կիրառվելու է ինտեգրման վերոհիշյալ տեսակները համատեղ և միաժամանակ՝ իրականացնելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարբեր մարմինների կողմից իրականացվող գործառույթների վերաբաշխում և հստակ սահմանում:

3. Գործառույթային վերաբաշխման արդյունքում ակնկալվում է բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների արդյունավետության մեծացում՝ ինչպես տնտեսական, այնպես էլ հաճախորդին այդ ծառայությունները տրամադրելու տեսանկյունից:

4. Հանրապետությունում տրամադրվող սոցիալական ծառայությունների (խորհրդատվական օգնության, իրավաբանական օգնության, վերականգնողական օգնության, դրամական օգնության, բնահրային օգնության, ժամանակավոր օթևանի տրամադրում, խնամքի կազմակերպում և սոցիալական ծառայությունների՝ օրենքով չարգելված այլ տեսակներ) մեջ ներկայումս առավել մեծ տեսակարար կշիռ ունի դրամական օգնության՝ տարաբնույթ նպաստների (պետական նպաստներ, գործազրկության նպաստ, ապահովագրական նպաստներ և այլն) և կենսաթոշակների (այսուհետ՝ դրամական վճարներ) վճարումները:

5. Ըստ էության, սոցիալական ծառայությունների տրամադրումը ենթադրում է սոցիալական աշխատողների մասնագիտական գործունեություն և սոցիալական դեպքի վարման համար մշակված մեթոդաբանության կիրառում: Սակայն, Հայաստանի Հանրապետության սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը դեռևս գտնվում է անցումային փուլում և սոցիալական ծառայությունների տրամադրումը հիմնականում իրականացվում է փաստաթղթերի հետ աշխատանք կատարելու շրջանակներում, որի պարագայում երկրորդական է դիտարկվում քաղաքացու (ընտանիքի) իրական կարիքների վերհանումն ու անհատական սոցիալական ծրագրի մշակման ու իրականացման միջոցով (սոցիալական դեպքի վարում) այդ կարիքների հնարավորինս ամբողջական բավարարումը: Հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ սոցիալական ծառայությունների տրամադրումն ինքնանպատակ չէ, այլ ուղղված պետք է լինի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) ինքնօգնության և կարիքը բավարարելու միջոցների խթանմամբ նրա վիճակի բարելավմանը:

6. Նախատեսվում է առանձնացնել.

1) դրամական վճարների (այդ թվում՝ կենսաթոշակների) տրամադրման բոլոր գործառույթները (նշանակում և վճարման կազմակերպում), դրանք վերապահել մեկ մարմնի՝ միավորելով ներկայումս գործող տարբեր ենթակայության կազմակերպությունների համանման գործառույթները: Նշված «նորաստեղծ» մարմինը կունենա իր կառուցվածքային ստորաբաժանումները՝ նկատի ունենալով օրենսդրությամբ սահմանված և տրամադրվող դրամական վճարների տեսակների առանձնահատկությունները:

2) սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը կամ սոցիալական աշխատանքի իրականացումը, համապատասխան գործառույթներով՝ դիմումների ընդունում, տնային այցելությունների կատարում, սոցիալական կարիքի գնահատում, փաստաթղթերի հավաքագրում, սոցիալական ծառայությունների տրամադրման մասին որոշման կայացում, դրամական վճարների համար առաջարկությունների ներկայացում և այլն, անհրաժեշտ է հնարավորինս ապակենտրոնացնել՝ մոտեցնելով բնակչությանը:

7. Պետության կողմից երաշխավորված բոլոր դրամական վճարները կտրամադրվեն մեկ մարմնի կողմից, որը համապատասխան ստորաբաժանումներ կունենա բոլոր մարզերում և տարածաշրջաններում, իսկ համայնքի կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունները կտրամադրվեն ինտեգրված համայնքային սոցիալական ծառայությունների կողմից:

8. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական ծառայությունների տրամադրումը, այդ թվում՝ դիմումների ընդունումը, կարիքի գնահատումը և սոցիալական ծառայություն տրամադրելու որոշում ընդունելու կամ դրամական վճարի համար առաջարկություն ներկայացնելու գործառույթները, որպես սոցիալական աշխատանքի ինստիտուտ, մեկ մարմնի կամ մեկ պատուհանի սկզբունքի կիրառման միջոցով իրականացնելը, ավելի արդյունավետ կդարձնի՝ դրանց տրամադրման գործընթացի համակարգման, ինչպես նաև դիմողին նմանատիպ սոցիալական ծառայությունների տրամադրման կրկնություններից խուսափելու առումով:

9. Գործառութային վերաբաշխումը հնարավորություն կտա մեծացնել մեկ աշխատողի սպասարկվող հաճախորդների թիվը, օպտիմալացնել աշխատանքը, սոցիալական ծառայությունների տրամադրման օպերատիվությունը, ինչպես նաև ծրագրերի հասցեականությունը՝ սահմանելով նաև համապատասխան ծանրաբեռնվածության նորմացույցեր և չափորոշիչներ:

10. Կազմակերպությունների վերակազմակերպման ընթացքում առավելագույնս կօգտագործվի առկա ռեսուրսները՝ հնարավորություն ընձեռելով համակարգ ընդգրկվել «սոցիալական աշխատանքի» մասնագետներին:

11. Սոցիալական ծառայություններ տրամադրող կամ սոցիալական աշխատանք իրականացնող մարմինները պետք է ունենան համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ կամ մասնագետներ (նեղ մասնագետ՝ որոշակի սոցիալական խմբի հետ աշխատանքի կամ կարիքին համապատասխան մասնագիտացած):

12. Նշված մոտեցումների իրականացման համար անհրաժեշտ են նաև շենքային այնպիսի պայմաններ, որոնք կբավարարեն կենտրոնացված ձևով դրամական վճարների նշանակման և վճարման գործառույթների, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի իրականացմանը: Հատկապես կարևորվում է բնակչությանը «մեկ պատուհանի» սկզբունքի կիրառմամբ ծառայությունների մատուցումը՝ միասնական ընդունարանների միջոցով:

13. Նշված կազմակերպությունները սպասարկելով որոշակի տարածքի բնակչությանը՝ ապահովելով նրանց սոցիալական պաշտպանության տարբեր իրավունքների իրացումը, ամբողջությամբ պետք է սպասարկեն հանրապետության ողջ տարածքը և ամբողջ բնակչությանը, ուստի և նշանակություն ունի դրանց աշխարհագրական տեղաբաշխումը՝ դրանց սպասարկման տարածքում:

14. Սոցիալական ծառայությունների տրամադրման կառավարման համակարգի բարելավման նպատակով անհրաժեշտ է 915 համայնքները պայմանականորեն միավորելով ձևավորել շուրջ 45 մարմիններ, որոնք էական դերակատարում կունենան այդ համայնքների բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների տրամադրման որոշումների կայացման գործում:

15. Համայնքային սոցիալական ծառայությունների կողմից կատարվող աշխատանքում կարևորվում է սոցիալական դեպք վարող սոցիալական աշխատողը, որը, ինտեգրված սոցիալական ծառայությունների շրջանակներում, յուրաքանչյուր դիմողի (դեպքի վարման) համար այդ գործընթացում կընդգրկի նաև այլ մասնագետների՝ սոցիալական աշխատող, հոգեբան, մանկավարժ՝ յուրաքանչյուր անձի համար ստեղծելով սոցիալական գործ:

16. Սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի շրջանակներում էական դերակատարում պետք է ունենան նաև ոչ պետական՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները, որոնք արդյունավետորեն համագործակցելով պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ պետք է մասնակցություն ունենան սոցիալական պաշտպանության ոլորտում համապատասխան որոշումների կայացման գործում:

17. Ձևավորվող տեղեկատվական համակարգը ևս պետք է ինտեգրված լինի, որում ներառվող տվյալները հիմք են հանդիսանում քաղաքացու վերաբերյալ կազմված անհատական սոցիալական գործի շրջանակներում վերականգնողական անհատական ծրագրի հաստատման, իրականացման կամ փոփոխման համար: Այս տվյալների հիման վրա սոցիալական աշխատողներն ապահովում են հաճախորդներին սոցիալական ծառայությունների տրամադրումը՝ ընթացքում ճշտելով նաև քաղաքացու ներկայացրած կամ իրենց կողմից գնահատված հաճախորդի իրական կարիքները:

18. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրային որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի 2)-րդ պարբերությամբ նախատեսված՝ մշակվող կառուցվածքագործառության մոդելի շրջանակներում կիրականացվի դրա կիրառման փորձնական ծրագիր, որից ակնկալվող արդյունքների համար որոշիչ նշանակություն ունի սույն հավելվածի 19-րդ կետով նախատեսված տեխնիկա-տնտեսական պայմանների առկայությունը:

19. Մոդելի փորձնական կիրարկման համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական բավարար պայմաններն են՝ համապատասխան շենք, որը տեղակայված լինի տվյալ մարմնի կողմից սպասարկվող տարածքի կենտրոնական մասում, ապահովելով հաճախորդների համար տրանսպորտային մատչելիությունը, ինչպես նաև բավարար տարածք՝ տեղավորելու համար անհրաժեշտ ստորաբաժանումները, միասնական ընդունարանները՝ սպասասրահներով, համակարգչային տեխնիկայի պահպանման և շահագործման բավարար պայմաններ և այլ կոմունալ-կենցաղային հարմարություններ՝ բնակչությանը բարձրորակ սպասարկում ապահովելու նպատակով: